ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО
ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И
СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N 01 «11» 2022թ.

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՐԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԷԴՈՒԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԿԱՐՄԻՐ ԿԱՄՈՒՐՋ» ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը (ի դեմս նախարարի տեղակալ՝ Ալֆրեդ Քոչարյանի) և բարերարի ներկայացուցիչ **Էդուարդ Մանուկյանը (այսուհետ կողմեր)**,

կարևորելով պատմամշակութային ժառանգության արժեքն ու հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը,

շահագրգռված լինելով օժանդակելու պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնմանն ու օգտագործմանը,

անհրաժեշտ համարեցին միավորել կողմերի հնարավորությունները և համատեղ աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Կենտրոն վարչական տարածքում գտնվող **«Կարմիր կամուրջ»** հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների շուրջ:

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Կենտրոն վարչական տարածքում գտնվող «Կարմիր կամուրջ» հուշարձանի ամրակայման և վերականգնման ուղղությամբ կողմերը պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝**

   1) ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների կատարման ընթացքում անվճար հիմունքներով կտրամադրի արխիվային փաստաթղթերի պատճենները,

   2) աշխատանքների կատարման ընթացքում կցուցաբերի մասնագիտական և գիտագործնական աջակցություն:

2. **Բարերարի ներկայացուցիչ Էդուարդ Մանուկյանը՝**

   1) բարերարի սեփական միջոցների հաշվին կիրականացնի հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ,

   3) իր իրավասությունների սահմաններում կցուցաբերի աջակցություն այլ հարցերում:

3" Հուշագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ: Հուշագիրը կարող է լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ հուշագրի պայմանները խախտելու դեպքում:

4. Կողմերը պարտավորվում են լրատվական միջոցներով լուսաբանել և ապահովել իրականացվող աշխատանքների հրապարակայնությունը:

5. Սույն հուշագիրը բաղկացած է 3 (երեք) էջից և կնքվում է հայերեն՝ 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին հատկացվում է սույն հուշագրի 1 (մեկ) օրինակը:

6. Սույն հուշագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

7. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝

նախարարի տեղակալ՝

ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆ

ստորագրություն

Բարերարի ներկայացուցիչ՝

ԷԴՈՒԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ստորագրություն